



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԿԻՐԱԿՎՈՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՃԱԿԵՐՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄ

Մանուկներու եւ պատանիներու կրօնադաստիարակչական եւ հայեցի կրթութեան նուիրուած մեր Կիրակնօրեայ Դպրոցները կը վայելէն անվերապահ հոգածութիւնն ու հովանաւորութիւնը Թեմիս բարեշան Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի:

Այս ծիրէն ներս, նախաձեռնութեամբ Քրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակին եւ կազմակերպութեամբ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմսին, կիրակնօրեայ դպրոցներու աշակերտական զարգացման մրցում տեղի ունեցաւ, նպատակ ունենալով քաջալերել եւ գնահատել Կիրակնօրեայ Դպրոցներէ ներս տարուող կրօնադաստիարակչական ծրագիրներն ու աշխատանքները: Մրցոյթիաւարը տեղի ունեցաւ Շաբաթ, 19 Ապրիլ 2008-ի յետ միջօրէի ժամը 1:00-400, Կլենտիլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ:

Կիրակնօրեայ Դպրոցներու տեսուչներու, ուսուցչական կազմերու առաջնորդութեամբ եւ աշակերտներու մասնակցութեամբ եկեղեցւոյ մէջ կարճ արարողութիւն տեղի ունեցաւ: Գերա. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան առաջնորդեց եկեղեցական արարողութիւնը եւ մեկնաբանեց օրուան աւետարանական հատուածը (Ա. Յովհաննեսի Ընդհանրական առաջին նամակէն 1:1-7): Տէրունական աղօթք «Յայր Մեր»ը եւ Կիրակնօրեայ Դպրոցներու «Մաղթերգ»ը երգելէ ետք, աշակերտներ անցնելով եկեղեցւոյ սրահ, Վեց խումբերու բաժնուեցան եւ հինգ տաղբեր դասակարգի մրցոյթիարցումներու ջանացին պատասխանել: Մրցակից խումբերը կը կրէին չորս աւետարանիչներու եւ թաղէոս ու Բարթողիմէոսս առաքեալներու անունները:

Կիրակնօրեայ դպրոցներէ ներս դասաւանդուող սուրբ գրային նիւթերու աւելի քան հարիւր հարցումներու, աղօթքներու, ոսկեղէն համարներու, շարականներու եւ տօներու շուրջ կատարուած մրցումին յաղթական խումբը, ինչպէս նաեւ զարգացման մրցումին բոլոր մասնակիցներ եւ ուսուցիչներ, ստացան յատուկ նուերներ:

Առաջնորդ Սրբազն Յօր անունով Յայր Միւռոն եւ Յայր Պարթեւ շնորհաւորելէ ետք յաղթական խումբը, գնահատեցին մասնակից բոլոր աշակերտներն ու ուսուցչական կազմերը, որոնց ամիսներու տքնաշան

աշխատանքի արդիւնքը ցոյց կու տար աշակերտներու ծանօթութեանց եւ գիտելիքներու զնահատելի ու գոհացուցիչ մակարդակը:

Աշակերտական զարգացման մրցոյթը յիշատակի հաւաքական լուսանկարով վերջ գտաւ ժամը 4:30-ին, արդիւնաւոր եւ յիշատակելի օր մը պարզեւելով բոլոր մասնակիցներուն:

## **SUNDAY SCHOOL GATHERING AND COMPETITION AT ST. MARY'S CHURCH**

On the afternoon of Saturday, April 19<sup>th</sup>, students from Prelacy Sunday Schools participated in a competition held at the “Armenag Der Bedrossian” Hall of St. Mary’s Church in Glendale. The competition was held under the auspices of the Prelate and was organized by the Sunday School Directorate with the purpose of encouraging and commending the activities carried out by the Sunday Schools.

The day began with church services in which Sunday School directors, teachers, and students participated, followed by the competition inside the hall during which the students were quizzed on Biblical events, prayers, hymns, and feasts. On behalf of the Prelate, Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian congratulated the winning team and commended all the teachers and students who devoted so much of their time and efforts to preparing for the event.

The event concluded with mementos being presented to the winning team and all the participants.